ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2/փ - 473

*hերթական համարը*

**ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի**

***ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զառիթափ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխության վերաբերյալ***

***(Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի) գոտևորման նախագծի մասով)***

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշման 13-րդ և 49-րդ կետերի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ *ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքը (Զառիթափ բնակավայրը) ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Վայոց ձոր-4 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի փոփոխությանը՝*

| ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի)<br>Հողամասի մակերեսը, ծածկագիրը կամ հասցեն, առկա նպատակային և գործառնական նշանակությունը | Փոփոխությունից հետո հողամասի նպատակային և գործառնական նշանակությունը |
|---|---|
| 10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 0.044 հա մակերեսով գյուղատնտեսական նպատակային նշանակության արոտավայր | 10-022-0238-0046 կադաստրային ծածկագրով 0.6 հա մակերեսով հողամասից 0.044 հա մակերեսով բնակավայրերի նշանակության հասարակական կառուցապատման հողեր |

2. Կառուցապատման հետագա գործառույթներն անհրաժեշտ է իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան, մասնավորապես ապահովելով՝ ՀՀՇՆ 30-01-2023 «Քաղաքաշինություն. քաղաքային և գյուղական բնակավայրերի հատակագծում և կառուցապատում» շինարարական նորմերի պահանջները:

3. Անհրաժեշտ է կառուցապատման հետագա գործառույթներն իրականացնել հաշվի առնելով ՀՀ ներքին գործերի նախարարության կողմից նշված պայմանը (կցվում է),

4. Վայք համայնքի ղեկավարին առաջարկվում է նշված փոփոխություններն արտացոլել Զառիթափ բնակավայրի ընթացիկ քաղաքաշինական քարտեզում,

- ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով ապահովել ՀՀ Վայոց ձորի մարզի Վայք համայնքի (Զառիթափ բնակավայրի) հաստատված գոտևորման նախագծում սույն որոշումից բխող փոփոխությունները:

| | | |
|---|---|---|
| *Հանձնաժողովի նախագահ՝* | | |
| | | Ե.Վարդանյան |
| *Հանձնաժողովի քարտուղար՝* | | |
| | | Հ.Դավթյան |

Երևան, « 2 » «դեկտեմբերի» 2024 թ.